

#### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

«Ա. ՉԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ Հ 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2021 թվականի հոկտեմբերի 18-ին կայացավ Ա. Չեխովի անվան հ. 55 դպրոցի կառավարման խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին խորհրդի 9 անդամներից 8-ը, Հ. Պողոսյանը բացակայում էր հարգելի պատճառով: Ներկա էին նաև ՀՀ ԿԳՄՍՆ ներկայացուցիչ Ռուզաննա Հարությունյանը և Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ և Ելենա Հարությունյանը:

Օրակարգում

1. Ա. Չեխովի անվան հ. 55 դպրոցի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի անցկացում:

Լսեցին՝ խորհրդի նախագահին՝ Լիլիթ Մարտիրոսյանին, որը բացեց նիստը՝ հաղորդելով, որ դպրոցի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվում է մրցույթ: Նա զեկուցեց, որ մրցույթին մասնակցում են 3 հավակնորդներ՝ Գայանե Սարուխանյանը, Տաթևիկ Մելքոնյանը, Դիանա Մինասյանը:

Խորհուրդը որոշեց դպրոցի զարգացման ծրագիրը ներկայացնելու համար յուրաքանչյուրին հատկացնել 20 րոպե: Հավակնորդները ելույթ են ունենալու իրենց ազգանունների այբբենական կարգով:

Առաջինն իր ծրագիրը ներկայացրեց Տ.Մելքոնյանը: Նրան հարցեր ուղղեցին Ն. Սարիբեկյանը և Հ. Բադալյանը:

Երկրորդը ելույթ ունեցավ Դ. Մինասյանը: Դպրոցի զարգացման ծրագիրը լսելուց հետո նրան հարցեր տվեց Ա. Արշակյանը:

Գ.Սարուխանյանը ներկայացրեց իր ծրագիրը: Նրան նույնպես հարցեր ուղղեցին կառավարման խորհրդի անդամները՝ Ա. Արշակյանը և Հ. Բադալյանը:

Այնուհետև տեղի ունեցավ բաց քվեարկություն: 1 «կողմ» ձայն ստացավ Տ. Մելքոնյանը, 3 «կողմ» ձայն՝ Դ. Մինասյանը, 4 «կողմ» ձայն՝ Գ. Սարուխանյանը:

Հավակնորդների ներկայությամբ ամփոփվեցին արդյունքները:

Կարգի համաձայն՝ հայտարարվեց կրկնակի քվեարկություն: Կրկնակի քվեարկության արդյունքները նույն էին: Տնօրեն չընտրվեց:

#### Կառավարման խորհուրդը որոշեց՝

1. Մրցույթը համարել կայացած:
2. ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 33-րդ կետի պահանջների համաձայն՝ հայտարարել նոր մրցույթ:
3. Համապատասխան փաստաթղթերն ուղարկել լիազոր մարմին:

Դպրոցի կառավարման խորհրդի նախագահ՝  
Քարտուղար՝

Լ. Մարտիրոսյան  
Գ. Սաֆարյան